ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2020 թվականի N 413– Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 488-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2020 թվականի նոյեմբերի 24-ին ներկայացված N 42 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սույն թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունում զոհված Լյովա Արթուրի Դանոյանի, Սամսոն Արտավազդի Առաքելյանի, Միեր Վլադիմիրի Զուրաբյանի, Դավիթ Դարչոյի Շահնազարյանի, Արմեն Ատոմի Բաղդասարյանի, Արման Սանասարի Աթաբեկյանի և Ղազար Սուրենի Սարուխանյանի հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով 520 /հինգ հարյուր քսան/ հազար դրամ փոխանցել <<ԵԴԵՄ 1>> ՍՊԸ-ին, 240 /երկու հարյուր քառասուն / հազար դրամ փոխանցել <<ՀԱՅԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ>> ԱՁ-ին և 285 /երկու հարյուր ութսունհինգ/ հազար դրամ փոխանցել <<ՍԱՄՎԵԼ ԷՎԻՆՅԱՆ>> ԱՁ-ին:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

11/25/2020

X

Signed by: STEPANYAN TATUL 2507680073

ՄԱՐԶՊԵՏԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՏԵՂԱԿԱԼ
Թ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 24
ք.Իջևան